

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ՕԾՎԵՑ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՈՍԿԵՎԱՆ ԳՅՈՒՂԻ Ս. ԳԱՅԱՆԵ ԵԿԵՂԵՑԻՆ

Դեկտեմբերի 4-ին ձեռամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Գուգարաց թեմում օծվեց Տավուշի մարզի Ոսկեվան գյուղի Ս. Գայանե եկեղեցին: Վեհափառ Հայրապետին ուղեկցում էին Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Մեսրուի եպս. Զուլֆյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս. Ներսիսյանը, Արմավիրի թեմի առաջնորդ Տ. Սիոն եպս. Աղամյանը և Մայր Աթոռի միաբաններ:

Տասնյակ տարիներ հնամենի այս եկեղեցին փակ էր հավատացյալների առջև և այն վերականգնվեց մոսկվաբնակ գործարար Արթուր Բաղդասարյանի ջանքերով:

Շնորհավորելով ներկաներին եկեղեցու օծման առիթով՝ Նորին Սրբությունը մասնավորապես նշեց. «Բազում տարիներ այս եկեղեցին լռել էր, աղոթք և շարական չէր հնչում նրա կամարների ներքո, հավատացյալն այստեղ երկրպագություն չէր առնում Ավագ Ս. Խորանից, իսկ Աստված, անհավատների մտածումով, թվում էր, թե դուրս է բերվել մեր կյանքից, և մեր ժողովուրդը խարխափում էր անհավատության մեջ: Բայց այսօր, հուրախություն մեզ ամենքիս, բարին մուտք է գործում Ձեր կյանքից ներս, Աստված կրկին խոսելու է Ձեզ հետ իր կենարար պատվիրաններով ու պատգամներով, որպեսզի Ձեր կյանքը դառնա օրհնյալ և աստվածահաճո. որպեսզի չարը դուրս մղվի Ձեր հոգիներից ու սրտերից և սերը, եղբայրսիրությունը, կամեցողությունը, ողորմածությունը վերստին Ձեր կյանքի ուղեկիցը լինեն... Մեր ազգի փրկության ճանապարհը 1700 տարիներ շարունակ եղել և մնում է Աստծո ճանապարհը, որ անցնում է եկեղեցու միջով»:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց նաև տեր և տիկին Արթուր և Գայանե Բաղդասարյաններին՝ պարգևատրելով նրանց Հայոց Եկեղեցու «Ս. Գրիգոր Լուսավորիչ» բարձրագույն շքանշանով:

Եկեղեցու օծմանը ներկա էին Տավուշի մարզպետը, բազմաթիվ հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ